որ մի կողմից կը մտնեն, միւսից դուրս կգան, որ եթէ հայոցը լինէր, մի հասկի համար ահագին աղմուկ պիտի բարձրացնէր։

Այս գիւղի բարձունքը կայ խաւրծիլ, մանտակ, օղին ևէն. բանջարեղէն, որպէս շատ մի լեռնային գիւղերու քաւշաններու մէջ։

Սորա քաւշանի մէջ կը գտնուի պաժտղ քար։

3, ՍԱՐՈՒՃԱ.

Կալոյի ջուրն Խաչլուայ քաւշանի արևելեան կողմից ի հարաւ արևմուտս ի Ջնալուն Խաչլուայ քաւշանը քանի բարձրանայ կընդլայնի. Սարուճա գիւղն մերձ Բօղ-Թեփէի քաւշանի բարձր արևելեան անկիւնը հաստատուած է. 1/4 ժամ Կալոյի ջրից բարձր և 1/4 ժամ ևս Զաթ գիւղի յարևմուտս մի զառիվայր և քարքարուտ տեղ ջրի աջ կողմի վերայ, 1 ժամ և Ղարաճեհեննեմի յարևելս 17 տուն Մօթանցի քրդեր են։

4, ԱՇԱՆ

Գիւղս Խաչլուայ արևմտեան հիւսիսն է, նաև Բօղ-Թեփէ լերան հարաւ արևմտեան կողերուն վերայ 15 տուն Քուրդքցի քրդ. բնակիչ ունէր Աշանայ ջրի վերայ. որպէս Խաչլուայ լեռնային մասի արևելեան անկիւնը բռնած էր Սարուճա նոյնպէս արևմտեան անկիւնը բռնած է Աշան, ուստի ջուր մի ի Ջնալով Խաչլուայ գետակին կը խառնուի։

Ամենապատուական ժախ կը լինի սորա քաւշանի մէջ. ժողովուրդն գարնան կը հաւաքէ, կը խաչէ. աշ-